ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 122-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 8 նստաշրջանի երկրորդ՝ 2025 թվականի նոյեմբերի 3-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 3-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
4) Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը հաստատելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 119-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին:
7) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 97-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
8) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 16-ի թիվ 73-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
9) Վարձակալության իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին:
10) 0.04023 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
11) 0.5426 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

12) 0.10852 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

13) 0.03470 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

14) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին Եղեգնաձոր համայնքի մասնակցության հայտը հաստատելու, ներդրում կատարելու և ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:

15) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր համայնքի մասնակցությունը հաստատելու, ներդրում կատարելու և ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:

16) Համայնքային սեփականություն հանդիսացող 0.0018 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

17) Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը քանդելու համար համաձայնություն տալու մասին:

18) Տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:

19) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության  Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի     N  123-Ն

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13  Դեմ -0  Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 123-Ն որոշման

հազ.դրամ

Եկամտային մաս.

| **Եկամտատեսակ** | **Նախատեսված** | **Կատարողական** | **Կատ. տոկոս** |
|---|---|---|---|
| | /3-րդ եռամսյակ/ | /3-րդ եռամսյակ/ | |
| Անշարժ գույքի հարկ | 23947.5 | 28506.8 | 119.0 |
| Գույքահարկ փոխադրամիջոցներից | 66888 | 70000 | 104.7 |
| Տեղական տուրքեր | 6350 | 6910.4 | 108.8 |
| Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 9750 | 12575.5 | 129.0 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 497276.1 | 497276.1 | 100.0 |
| Այլ դոտացիաներ | | | 0.0 |
| Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 1399.3 | 1399.3 | 100.0 |
| տեղական վճար | 46290 | 48453.7 | 104.7 |
| որից՝ | | | |
| տեղական վճ.՝ծնողական մուծում | 14390 | 15744.3 | 109.4 |
| տեղական վճ.՝ աղբահանություն | 17280 | 18805.7 | 108.8 |
| տեղական վճ.՝ խմելու ջրի վարձավճար | 4650 | 6925.3 | 148.9 |
| այլ տեղական վճար | 9970 | 6978.4 | 70.0 |
| Պետական տուրք | 2175 | 1965 | 90.3 |
| **Այլ եկամուտներ** | **21259.8** | **36716.2** | **172.7** |
| ***Ընդամենը*** | ***675335.7*** | ***703803*** | ***104.2*** |
| ***Ընդամենը սեփական եկամուտ*** | ***176660.3*** | ***205127.6*** | ***116.1*** |

| Ծախսային մաս | **Նախատեսված** | **Կատարողական** | **Կատ. տոկոս** |
|---|---|---|---|
| | **/3-րդ եռամսյակ/** | **/3-րդ եռամսյակ/** | |
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 133287.7 | 133287.7 | 100.0 |
| Պարգևատրումներ | 10628.3 | 10628.3 | 100.0 |
| Էներգետիկ ծառայություններ | 15672.3 | 15672.3 | 100.0 |
| Կոմունալ ծառայություններ | 62386.3 | 62386.3 | 100.0 |
| Կապի ծառայություններ | 1089.2 | 1089.2 | 100.0 |
| Ապահովագրական ծախսեր | 321.5 | 321.5 | 100.0 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 614.6 | 614.6 | 100.0 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում | 6227.4 | 6227.4 | 100.0 |
| Մասնագիտական ծառայություններ | 6351.4 | 6351.4 | 100.0 |
| Ընթացիկ նորոգում և պահպանում | 2379 | 2379 | 100.0 |
| Նյութեր | 4899.5 | 4899.5 | 100.0 |
| Դրամաշնորհներ | 11409.4 | 11409.4 | 100.0 |
| Սուբսիդիաներ | 337585.9 | 337585.9 | 100.0 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ* | 574 | 574 | 100.0 |
| Այլ ծախսեր** | 1595 | 1595 | 100.0 |
| Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, շինարարություն | 112410.2 | 112410.2 | 100.0 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 4775.2 | 4775.2 | 100.0 |
| Այլ հիմնական միջոցներ | 6102.5 | | |
| ***Ընդամենը*** | ***712206.9*** | ***712206.9*** | |
| ***Հողի իրացումից մուտքեր*** | | ***-111229.4*** | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 124-Ն

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ, 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Եկամտային մասում՝

ա) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի վարչական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ տողին (տող 1393) ավելացնել 7 191 900 (յոթ միլիոն մեկ հարյուր իննսունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ,

բ) համայնքային սեփականություն համարվող հողի օտարումից գոյացած 79 700 000 (յոթանասունինը միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը ներառել համայնքային բյուջե՝ հողի օտարումից մուտքեր տողին (տող 6410).

2) Ծախսային մասում պակասեցնել՝

ա) գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 02 դաս 04 (ոռոգում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից 26 000 000 (քսանվեց միլիոն) ՀՀ դրամ,

բ) գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ.

գ) գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 03 դաս 01 (ջրամատակարարում և կոյուղու համակարգ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ.

դ) գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 05 դաս 01 (ճանապարհային տրանսպորտ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախահետազոտական ծախսեր) հոդվածից՝ 2 910 000 (երկու միլիոն ինը հարյուր տաս) ՀՀ դրամ.

ե) գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածից՝ 600 000 (վեց հարյուր հազար)

3) Ծախսային մասում ավելացնել՝

ա) գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 45 160 000 (քառասունհինգ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ նոր գերեզմանատան կառուցման, գազաֆիկացման աշխատանքների, Մալիշկա բնակավայրի մշակույթի տան վերանորոգման լրացուցիչ աշխատանքների և 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ֆինանսավորման համար.

բ) գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 05 դաս 01 (ճանապարհային տրանսպորտ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 59 168 000 (հիսունինը միլիոն հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ՝ ասֆալտապատման և փոսալցման աշխատանների և 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին՝ 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ֆինանսավորման համար,

գ) գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 04 դաս 01 (արտաքին լուսավորություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 10 882 000 (տաս միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման լրացուցիչ աշխատանքների, Մալիշկա

բնակավայրի լուսավորության ցանցի աշխատանքների և 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ֆինանսավորման համար.

դ) գործառնական դասակարգման բաժին 09 խումբ 01 դաս 01 (նախադպրոցական կրթություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ «Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին սեպտիկայի կառուցման ֆինանսավորման համար, 1 191 900 (մեկ միլիոն մեկ հարյուր իննսունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ 1.5-5 տարեկան կրթության և զարգացման առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների նախադպրոցական կրթության ապահովման ֆինանսավորում՝ «Եղեգնաձորի թիվ 2 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող թվով 4 (չորս) երեխաների համար՝ 297 975 (երկու հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, «Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող թվով 7 (յոթ) երեխաների համար՝ 521 456 (հինգ հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ, Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Արևիկ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ հաճախող թվով 4 (չորս) երեխաների համար՝ 297 975 (երկու հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, «Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող թվով 1 (մեկ) երեխաների համար՝ 74 494 (յոթանասունչորս հազար չորս հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 125-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 83-Ն որոշմամբ հաստատված համայնքային սոցիալական ծրագիրը (X գլուխ, 3-րդ պարբերություն) և ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

Հավելված

Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 125-Ա որոշման

**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՆ՝ ԸՍՏ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ**

| ՀՀ | Ազգանուն, անուն | Բնակավայր | Հասցե | Տրամադրվող հատուցման չափը ՀՀ դրամով արտահայտված* |
|---|---|---|---|---|
| 1 | Պողոսյան Շողիկ | Եղեգնաձոր | Նարեկացի 13 | 30 000 |
| 2 | Հայրապետյան Ալլա | Եղեգնաձոր | Նարեկացի 6, բն. 8 | 30 000 |
| 3 | Զաքարյան Արտուշ | Մալիշկա | 29-րդ փողոց, տուն 7 | 20 000 |
| 4 | Հակոբյան Ռազմիկ | Մալիշկա | 3-րդ փողոց, տուն 47 | 45 000 |
| 5 | Բաղդասարյան Արթուր | Գետափ | 9-րդ փողոց, նրբ. 1, տուն 23 | 200 000 |
| **Ընդամենը** | | x | x | 325 000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 126-Ն

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԹԻՎ 93-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի՝ «Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 93-Ն որոշման հիմնական մասի 1-ին կետի 2-րդ ենթակետի և պարբերությունների գործողությունը դադարեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

*Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք*
*ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 127-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 119-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունման օրվանից անվավեր ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի՝ «Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 119-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 128-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԹԻՎ 97-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի՝ «0.97607 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 97-Ա որոշման վերնագրում և հիմնական մասի 1-ին կետում «0.97607» թիվը փոխարինել «0.8200» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 129-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ԹԻՎ 73-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 16-ի՝ «Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին» N 73-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 130-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Արշակի Նազարյանի դիմումը, վերջինիս և Գետափ համայնքի ղեկավարի միջև 2010 թվականի օգոստոսի 10-ին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ Հասմիկ Նազարյանը ունի հողամասի վարձակալության նախապատվության իրավունք․

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1․ Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող, Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0․074 հա վարելահողը (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0051) նախապատվության իրավունքով, առանց մրցույթի, 10 տարի ժամկետով վարձակալության տրամադրել քաղաքացի Հասմիկ Արշակի Նազարյանին՝ տարեկան վարձավճար սահմանելով՝ 7400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

2․ Առաջարկել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Հասմիկ Արշակի Նազարյանի հետ կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր:

3․Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՑՈՂՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 131-Ա

## 0.04023 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 1667-Ն հրամանով հաստատված հավելվածի՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկի 14 կետը և քաղաքացի Վալերիկ Հովհաննիսյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Վալերիկ Էդվարդի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 0.04023 հա վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 14022025-10-0013, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0084) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն հիմնելու նպատակով (գինու գործարան):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի Ν 132-Ա

## 0.5426 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Լյուդվիգ Գրիգորյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Լյուդվիգ Բագրատի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 0.5426 հա վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 21082024-10-0027, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0368-0017) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների՝ ձկնաբուծական արհեստական լճակ կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 133-Ա

## 0.10852 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Արմեն Հովիկի Մովսիսյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Արմեն Հովիկի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.10852 հա այլ հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 16042025-10-0007, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0354-0050) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման՝ հանգստյան գոտի կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13　　Դեմ -0　　Ձեռնպահ -0
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 134-Ա

## 0.03470 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Արմեն Աշոտի Գաբրիելյանի կողմից լիազորված անձ Անի Հասրաթյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Արմեն Աշոտի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 3.76249 հա այլ հողատեսքից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 03012024-10-0021, կադաստրային ծածկագիր՝ 10-042-0032-0028) 0.03470 հա-ի նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 135-Ա

**ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 25-րդ և 42-րդ կետերի, 92-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին Եղեգնաձոր համայնքի մասնակցության ներքոնշյալ հայտը (ծրագիր)՝

««Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի մասնակի վերանորոգում և կահավորում»:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում՝ համայնքի բյուջեից կատարել 7 495 480 (յոթ միլիոն չորս հարյուր իննսունինից հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով ներդրում:

3. Սույն որոշման առաջին կետում նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով՝ համայնքի բյուջեում (գործառնական դասակարգման 09.01.01 ոլորտ) արտաբյուջետային հաշիվ բացելու համար տալ համաձայնություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի  N 136-Ա

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 25-րդ և 42-րդ կետերի, 92-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր համայնքի մասնակցությունը: Ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունն ուղղել «Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի վերանորոգման, վերազինման, ֆոտովոլտային կայանի տեղադրման նպատակներով:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում՝ համայնքի բյուջեից կատարել մինչև 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամի չափով ներդրում:

3 . Սույն որոշման առաջին կետում նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով՝ համայնքի բյուջեում (գործառնական դասակարգման 09.05.01 ոլորտ) արտաբյուջետային հաշիվ բացելու համար տալ համաձայնություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 137-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0018 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Մկրտչյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Կամոյի փողոց 2/9 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության 0.0018 հա մակերեսով բնակելի կառուցապատման, ավտոտնակով (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0170-0059-001) ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Արմեն Ռաֆիկի Մկրտչյանին:

2. Վաճառքի գին սահմանել 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ (կադաստրային արժեքի 100 տոկոսը):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի  N 138-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, քննարկելով Գլաձորի վարչական ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը և հիմք ընդունելով «ԱՐՏ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացված՝ շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտական N 25/4.30 եզրակացությունը, համաձայն որի շինությունը գտնվում է չորրորդ կարգի վթարային վիճակում.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի 10-րդ փողոց 3 հասցեում գտնվող կաթսայատունը քանդելու համար տալ համաձայնություն:

2. Սույն որոշման առաջին կետում նշված անշարժ գույքի քանդումն իրականացնել Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ -13  Դեմ -0  Ձեռնպահ -0
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 139-Ա

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, քննարկելով քաղաքացի Լիաննա Ձոհրաբյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սան Մոնթե Դրաստամատի Առաքելյանի ծնողական վճարի (տեղական վճար) նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2025 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2025 թվականի N 140-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2025 թվականի նոյեմբերի 28-ը, ժամը՝ 18:00-ն, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԽԻԿ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 03
ք. Եղեգնաձոր